

## ՍՓՅՈՒՇԱՐԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ ԿՐԹԱՄԾՎԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ\*

**ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՎՅԱՆ  
պատմ.գիտ. թեկնածու, դոցենտ**

Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը, լինելով չճանաչված պետություն, իր սոցիալ-տնտեսական, առողջապահական, մշակութային և այլ ոլորտների զարգացման համար զրկված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ առումով անգնահատելի է սփյուռքահայ բարեգործական, մշակութային, եկեղեցական կազմակերպությունների և հիմնադրամների օգնությունը: Ինչպես պատերազմից հետո, այնպես էլ այժմ, հարաբերական խաղաղության պայմաններում նրանց աջակցությամբ կյանքի են կրցվել ռազմավարական նշանակություն ունեցող շատ ծրագրեր. ուրիշ են կանգնել գյուղեր ու քաղաքներ, կառուցվել և շահագործման են հանձնվել ծանապարհներ, գազատարներ, ջրագժեր, հիվանդանոցներ և այլն: Արցախին օգնելու գործում մեծ ավանդ ունեն սփյուռքահայ բարերարները, որոնք առանձին նվիրատվությամբ, ինչպես նաև համագործակցելով «Դայաստան» համահայկական հիմնադրամի, այլ կազմակերպությունների և ԼՂՀ կառավարության հետ, Արցախում իրականացնում են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում կրթամշակութային բնագավառում:

Մարտակերտի շրջանի Վաղոնիաս գյուղի դպրոցը կառուցվել է 1990-ական թվականներին՝ պատերազմական գործողությունները դադարեցվելուց հետո, արգելության համար բարերարներ Յովսեփ և Քրիստին Թախթաների կողմից:[1] Շուրջ երկու տասնամյակ անց Վաղոնիասում նոր դպրոց կառուցվեց՝ երկու մասնաշենքով 240 աշակերտի համար՝ ԼՂՀ կառավարության և գործարար Սամվել Ալեքսանյանի հատկացրած միջոցներով, իսկ հին դպրոցը տրամադրվեց համայնքի մանկապարտեզին: [2]

Ամերիկահայ Վաչե և Ռիտա Յովսեփյանները, կորցնելով իրենց 20-ամյա դստերը՝ Անիթային, բարի մարդկանց աջակցությամբ հիմնեցին «Անիթա Յովսեփյան» հիմնադրամ, որի միջոցներով 1998թ-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Աշան գյուղում կառուցվեց Անիթա անունը կրող միջնակարգ դպրոցը: «Անիթա Յովսեփյան» հիմնադրամի ներկայացուցիչներ տեր և տիկին Յովակ և Գոհար Յովսեփյանների աջակցությամբ 2010թվականի սեպտեմբերին շահագործման հանձնվեց դպրոցին կից կառուցված Յովակ և Գոհար Յովսեփյանների անվան մարզադաշտը և Խաչիկ Տեր-Մկրտչյանի անվան գրադարանը: [3]

1997 թվականից Շուշիում գործում է Դանել Ղազարյանի անվան համակրթական երաժշտական դպրոցը, որը հիմնադրվել է ամերիկահայ հայտնի երգիչ, գեղանկարիչ, բարեգործ Կարեն Ղարիբյանի նախաձեռնությամբ, սփյուռքի մեր հայրենակիցների նյութական և բարոյական աջակցությամբ: Դպրոցը բացվեց 30 աշակերտով, իսկ 2012 թվականին ուներ 12 դասարան՝ մոտ 120 աշ-

\* Յոդվածն ընդունվել է 20.09.2013:

Յոդվածը տպագրության է երաշխավորել ՍՄԴ պատմության ամբիոնը:

ակերտով: Ակսած 2010թ.-ից՝ դպրոցը պետության կողմից ֆինանսավորվեց 50%-ով (աշխատավարձի մասով), իսկ հաջորդ տարի՝ 70%-ով: [4] ԼՂՀ կառավարության որոշմամբ՝ 2013թ. հունվարից դպրոցի ֆինանսավորումը (աշխատավարձի մասով) կատարվում է պետքուժեի հաշվին, բացի այդ, կառավարությունը դպրոցին նվիրել է լաբորատորիաներ՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա առարկաների համար:

Ֆրանսահայ բարերարներ կարպիս և Նիկոլ Նիկողոսյան ամուսինները 2002թ. Մարտունու շրջանի Շեխներ գյուղում կառուցեցին երկհարկանի դպրոցի շենք՝ ի հիշատակ Կարպիսի հոր և մոր Նիկողոս և Երմինե Նիկողոսյանների: Դպրոցը նախատեսված է 132 աշակերտների համար: [5] Ավելի ուշ դպրոցին կից շահագործման հանձնվեց սպորտահիլիզը:

Դարրութի շրջանի Վարդաշատ գյուղի դպրոցի վերանորոգման աշխատանքները 2003 թվականին իրականացվել է բարերար Վարուժան Քչիքյանի ֆինանսավորմամբ, [6] իսկ հրանի Խոլամական Յանրապետության քաղաքացի Եղիկ Երմյանի միջոցներով նորոգվել է Մարտակերտ քաղաքի մանկական կրոնադաստիարակչական կենտրոնի շենքը: [7]

Ստեփանակերտի հմ. 11 Եռահարկ դպրոցի շինարարության նվիրատունները էին ամերիկահայ բարերար Զերարդ Թրիանջյանը, «Յայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ Արևմտյան շրջանի տեղական մարմինը:[8] Կրթօջախը շահագործման է հանձնվել 2010թ. ամռան:

Ուսաստանաբնակ բարերար Սերգեյ Սարկիսովի տրամադրած ֆինանսական միջոցներով՝ (շուրջ 3 մլն դրամ) կառուցվեց և շահագործման հանձնվեց Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան հմ. 3 միջնակարգ դպրոցը: Նրա Եղայր Նիկոլայ Սարկիսովի միջոցներով հաջորդ տարի՝ 2014 թվականին, շահագործման կիանձնվի Ստեփանակերտի հմ. 1 դպրոցի նորակարուց շենքը: [9]

Ուսաստանի հայ բարերարների նվիրաբերած միջոցներով հիմնովին նորոգվեց Շուշիի Խաչատուր Արույանի անվան դպրոցի շենքը: Սա, ի թիվս կարևորագույն այլ ծեռնարկների, «Սեր Շուշին» ծրագրի հիմնական քաղադրիչներից է: Դպրոցը Եռահարկ կառույց է, ունի չորս մասնաշենք, որոնք նախատեսված են 1200 աշակերտի համար: Շուշեցի դպրոցականների թիվը դեռևս երեք անգամ պակաս է: [10] Սոսկաբնակ բարերար Կոնստանտին Սարգսյանի ֆինանսավորմամբ վերանորոգվեց Շուշի քաղաքի նախկին Սարդիամյան օրիորդաց գիմնազիայի շենքը, որտեղ ներկայումս տեղակայվել են ԼՂՀ մշակույթի և Երիտասարդական հարցերի նախարարությունը և այլ հաստատություններ:

2012 թ. ամռանը կանադահայ բարերար, բժիշկ սրտաբան Ալբերտ Սելիք-Ղասումյանի ֆինանսական միջոցներով շահագործման հանձնվեց Արցախի պետական համալսարանի հանրակացարանի վերանորոգված ու կահավորված 4-րդ և 5-րդ հարկերը, ավելի քան հինգ տասնյակ ուսանողների համար: Չորրորդ հարկը նվիրված է բարերարի եղբոր՝ Սերգեյ Սելիք-Ղասումյանի, իսկ հինգերորդը՝ քրոջ ժուլիետ Սելիք Ղուսամյանի հիշատակին: [11]

Ծննդագույրկ կամ սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող երեխաների խնդիրները լուծելու նպատակով Շուշիում կառուցվում է նոր գիշերօրիկ դպրոց: Եռահարկ շինությունը, որում կապեեն արցախցի ուժառուն Երեխաներ, կառուցվում է ամերիկահայ անվանի բարերար Յուայր Յովնանյանի նվի-

րատվությամբ և L77 կառավարության համաֆինանսավորմամբ: [12]

Ներկայումս Ոուսաստանի հայերի միության նախագահ Արա Վերահամյանի միջոցներով Ստեփանակերտում կառուցվում է հմ. 6 դպրոցը, իսկ Սարտակերտի շրջանի Վանք գյուղում կառուցվում է Սուվորովի և Մադարովի անվան զինվորական ուսումնարանը՝ մեծ բարերար Հնոն Դայրապետյանի ֆինանսավորմամբ:

Սփյուռքի հայ բարերաները մեծ ուշադրություն են դարձնում ոչ միայն դպրոցաշինությանը, այլև՝ կահավորմանը, ինչպես նաև ժամանակակից համակարգչային դասարանների բացմանը:

Արցախի դպրոցներում համակարգչային դասարանների բացման գործում ակտիվ գործունեություն են ծավալել իտալահայ բարերարներ տեր ու տիկին Սարո և Սիրան Խուդավերդները: Նրանց նվիրատվությամբ 2012թ. ժամանակակից համակարգչային դասարան է բացվել Ստեփանակերտի հմ.5 հիմնական դպրոցում, Սիրան Խուդավերդի հոր՝ դոկտոր Կարապետ Բորանյանի հիշատակին: Բարերանները մտադրություն ունեն 2014 թվականին համակարգչային դասարան բացել հմ.2 դպրոցում: [13]

L77 կրթության և գիտության նախարարությունը 2011-2012 ուսումնական տարվանից տարրական դպրոցի համար որդեգրել է նոր ուսումնական ռազմավարություն (ՆՈՒՌ), որն արգենտինահայ բարերար Եղուարդո Էռնելյանի ծրագիրն է, և որի եռական 1-4րդ դասարաններում սովորող երեխաններին մեկական համակարգի նվիրելու միջոցով տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ դասի արդյունավետության բարձրացումն է, նրանց գիտելիքների հարստացումը: Ծրագրի առաջին փուլում ընդգրկվել են Ստեփանակերտի և Շուշի դպրոցները, որին հաջորդելու են հանրապետության բոլոր շրջանները: Տարրական դասարանների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնակցում էին 160 դասպարներ և ինֆորմատիկայի ուսուցիչներ: Պարապմունքները վարում էին Արգենտինայից և Ուրուգվայից ժամանած մասնագետները: [14]

2002թ. սեպտեմբերին ֆրանսահայ բարերար Սամվել Շնորհությանի կողմից մարդասիրական օգնության կարգով ուղարկված գրենական պիտույքներով ու դպրոցական այլ իրերով լի 300 աշակերտական պայուսակները բաշխվել են Սարտակերտի շրջանի Վանք գյուղի դպրոցահասակ երեխաններ ունեցող ընտանիքներին: [15]

Դաշվի առնելով երեխանների նախադպրոցական կրթության կարևորությունը՝ սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձնում մանկապարտեզների շինարարությանն ու կահավորմանը:

Բարերար Եղիկ Դույանի ֆինանսական աջակցությամբ կառուցվել և շահագործման է հանձնվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղի 120 տեղանոց մանկապարտեզը: Ներկայումս բարերար Սեյրան Կարապետյանի ֆինանսավորմամբ Ստեփանակերտում կառուցվում է 360 տեղանոց հմ.3 մանկապարտեզը:

Բարերար Արմեն Թոփուզյանի հովանավորությամբ կառուցվել է ժամանակակից խաղահրապարակ Քաշաթաղի շրջանի Քարեգահ համայնքում, վերանորոգվել է Այգեստանի մանկապարտեզի շենքը բարերար ժամետ Ուուշի ֆինանսական աջակցությամբ: Դայ օգնության միության Արցախի մանկապարտեզ-

ներին է նվիրատվություն փոխանցել ամերիկահայ բարերար, ԴՕՄ-ուի Զասիկ Բունիաթյանը, ողջ տրամադրվել է բոլոր մանկապարտեզների սաներին և աշխատակիցներին: [16]

ԱԱՆ քաղաքացիներ Զորջ և Քերոլայն Նաջարյանները Մարտակերտի շրջանում կատարել են մի շարք մարդասիրական դրամաբաշխություններ: Շրջկենտրոնի մանկապարտեզին հատկացրել են 145 հազար դրամ, Մարտա գյուղի 65 երեխանների՝ 15 հազարական դրամ, իսկ Ստեփանակերտում բնակվող երեք հաշմանդամ երեխանների ծնողներին տրամադրվել են 290 հազար դրամ՝ նրանց հետագա բուժումը ՀՀ-ում և ՈՒ-ում կազմակերպելու համար: [17]

Սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձնում երեխանների ամառային հանգստի կազմակերպմանը: 2005 թվականից Շուշիի «Նարեկացի» արվեստի միության կենտրոնում գործում է «Արամ Մանուկյան» ամառային ճամբարը, որի կազմակերպիչներն են կանադահայ հասարակական-մշակութային գործիչ, բանաստեղծ Դայդուկ Չամլեանը և նրա կինը՝ մանկավարժ Ալիդա Չամլեան-Դավիթեանը: Շուշեցի երեխանների համար այստեղ կազմակերպվում են հայրենասիրության և քաղաքացիական պարտքի զգացումի մասին դասեր ու մարզական պարապմունքներ: [18]

Արտերկրներում ապրող մեր հայրենակիցների աջակցությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր մշակույթի բնագավառում: Դեռ պատերազմի թեժ օրերին սիրիահայ Զաքար Քեշիշյանի կողմից 1992թ. Շուշիի «Արամ Մանուկյան» վարժարանում հիմնադրվեց «Վարանդա» երգչախումբը: Այն ի սկզբանե եղել է մանկապատամեկան երգչախումբ: «Իհարկե, այդ տարիներին Շուշիում սակավաթիվ մարդիկ էին ապրում և, սոցիալական պայմաններից ելնելով, շատ հաճախ երեխանները չէին կարողանում ներկայանալ պարապմունքներին», - հիշում է Զաքարը, սակայն այսօր հպարտանում է, որ «Վարանդա» երգչախմբում մոտ 500 երեխա է երգել 20 տարիների ընթացքում, իսկ այսօր երգչախումբ են հաճախում իր առաջին սաների երեխանները, որոնց նա իր թոռներն է համարում: Երգչախումբն այսօր գտնվում է պետական հոգածության ներքո և իր գործունեությունը շարունակում է մանկական, պատանեկան և երիտասարդական կազմերով: Երգչախումբը ավելի քան 200 համերգներով հանդես է եկել Արցախի տարբեր շրջաններում, գորամասերում, դպրոցներում, ինչպես նաև Դայաստանում և Լիրամանում: Երգչախմբի մասին նկարահանվել են երկու վավերագրական ֆիլմ, իսկ 2004-ին «Վարանդան» ծայնագրել է «Քերտաքաղաք» խտակավառակը: [19] Արցախում երգչախմբային արվեստի զարգացման գործում ունեցած ծառայությունների համար երգչախմբի գեղարվեստական դեկավար և խմբավար Զաքար Քեշիշյանը 2002-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ», Դանրապետության հոչակման 20-ամյա հորեւյանի առթիվ «Երախտագիտություն» մեդալով: [20]

Արցախում մի շարք բարեգործությունների շարքում ամերիկահայ մեծ բարերար Վահե Կարապետյանը ընդգրկեց նաև «Արցախի ծայն» երաժշտական նախագծով խմբի ամերիկյան շրջագայության ֆինանսավորումը: [21]

Դայ բարերարները հայտնի են եկեղեցաշեն գործունեությամբ: Նրանց կողմից ֆինանսավորվել են մի շարք եկեղեցիների կառուցումն ու վերակառուցումը: Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի Սուլը Մարիամ Աստվածածին եկե-

ղեցին կառուցվել է ծնունդով վաղուհասցի ռուսաստանաբնակ գործարար Գրիգորի Շայրապետյանի ֆինանսավորմամբ: [22]

Նադրութի շրջանի Քարագլուխ գյուղը, դեռ պատերազմը չսկսած՝ 1991-ին, ազերիների կողմից հիմնովին ավերվել էր: Ազատագրումից հետո քարագլուխ ցիները վերադարձան գյուղ, բայց հարազատ օջախները ավերված էին, ուստի նրանք՝ բնակություն հաստատեցին գյուղի ստորոտում, իսկ բնակատեղին անվանեցին Չորագյուղ: 2013թ. սեպտեմբերի 5-ին Քարագլուխ գյուղի բարձունքում տեղի ունեցավ Սուլր Շովիաննես Մկրտիչ նորակառույց Եկեղեցու բացումը: Կառուցումը նախաձեռնել և իրականացրել է արմատներով քարագլուխից Ս. Պետերբուրգի բնակիչ, ճարտարապետ Մաքսիմ Աթայանցը՝ հույս ունենալով, որ Եկեղեցու կառուցումը խթան կհանդիսանա որպեսզի իր շուրջը համախմբի մարդկանց: [23]

Քաշաթաղի շրջանի Բերձորի Սուլր Նահատակաց Եկեղեցին կառուցվել է ամերիկահայ բարերար Վահե Կարապետյանի ֆինանսական միջոցներով: «Արցախը դարձավ իմ ոգեշնչման աղբյուրներից մեկը, - գրում է նա: Ես հասկացա, որ Արցախը լույս է, հույս է, այն մեր ազգային խորհրդանշն է: Իսկ խորհրդանիշը պետք է պահել աչքի լույսի պես: Արցախի վերածննդից մինչև այսօր նրա կարգավիճակը միջազգային հարթակում դեռ չի որոշվել, բայց մեզ համար այն Շայրենիք է, մեր ազգի թալիսմանն ու փարոս»:[24]

Այսօր էլ սփուռքահայ բարերարները շարունակում են իրենց հայրենանվեր, ազգանպաստ գործունեությունն Արցախում: Նրանց բարեգործական գործունեությունը վկայում է սփյուռքի հոգեհարազատության մասին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հիմնադրամ 1999, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն, Եր., 2000, էջ 22:
2. «Շայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, Եր., 2012, էջ 25:
3. «Ազատ Արցախ», 14 հոկտեմբերի 2010:
4. «Ազատ Արցախ», 3 հուլիսի 2012:
5. «Կարաբահսкий էкспресс», ապրель-սեպտեմբեր 2006 N 2-3, стр. 47-48
6. ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, գ.1, կ-10, պ.մ.45, թ.55:
7. Նույն տեղում, ֆ.345, գ.2, կ 10, պ.մ.3, թ.4:
8. «Ազատ Արցախ», 21 մայիսի 2009:
9. «Ազատ Արցախ», 4 մայիսի 2013:
10. «Շայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 20:
11. «Ազատ Արցախ», 7 հուլիսի 2012:
12. «Շայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 36:
13. «Ազատ Արցախ», 21 մարտի 2013:
14. «Ազատ Արցախ», 10 սեպտեմբերի 2011:
15. ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, գ.1, կ 9, պ.մ. 43, թ.36
16. «Ապառաժ», 9-16 հունվարի 2008:

17. ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, գ.1, կ 9, պ.մ.43, թ.57:
18. «Ազատ Արցախ», 20 հուլիսի, 2013:
19. «Ապառաժ», 1-15 սեպտեմբերի, 2012:
20. «Ազատ Արցախ», 15 սեպտեմբերի 2011:
21. Վահե Կարապետյան, Կամք, որ հայինն է, Եր., 2011, էջ 506:
22. «Ազատ Արցախ», 23 փետրվարի, 2012
23. «Ազատ Արցախ», 14 սեպտեմբերի 2013
24. Վահե Կարապետյան, նշվ. աշխ., էջ 483:

### **Резюме**

#### **Благотворительные вложения спорских армян в НКР в реализации образовательно-культурных проектов**

**Аракат Варданян**

Нагорно-Карабахская Республика будучи непризнанным государством лишена возможности получать кредиты на развитие экономической, социальной, культурной и других сфер от международных финансовых организаций. Следовательно поддержка Армянской диаспоры, благотворительных, культурных организаций и церкви является неоценимой. Велика роль индивидуальных спонсоров, которые осуществляют в Арцахе ряд благотворительных программ. Благодаря их финансовой поддержке претворились в жизнь многие благотворительные, а также образовательно-культурные проекты.

### **SUMMARY**

**The Benevolent investments of the Armenians from Diaspora in the NKR in realization of educational and cultural projects.**

**Ararat Vardanyan**

The Nagorno-Karabakh Republic, being the unrecognized state is deprived of the opportunity to get credits from international financial organizations for the development of social-economic, cultural and other fields. Consequently, the support of Diaspora, benevolent, cultural organizations and the churches is invaluable. The role of the individual sponsors, that realize series of benevolent programs is invaluable. Due to their financial support most benevolent , educational and cultural projects have been realized.